

յացուցին, Արամազդ, Անահիտ, Միհր և  
Տիր անուանց տակ: Դրացիներուն նը-  
ման ունեցան իրենց գեղեցկութեան Աս-  
տուածունեն (Աստղիկ), որդիքրեցին հետ-  
զեատէ Ասորոց Նանէն և Բարշամինն և  
իրենց քաջարի Նախնիքներ աստուածա-  
ցուցին, որպէս Վահագն՝ Հաւանականա-  
րար այս շրջանին մէջ կռապաշտական  
հակում մ'էր միայն գոյութիւն ունեցածն,  
և ապա Արշակունի անուանեալ շրջանին  
մէջ բոլորովին կռապաշտական եղաւ:  
Կռապաշտական հակում աւելի Արևմտեան  
Հայոց մէջ յառաջ զացած էր, ուր էին և  
կռապաշտական կրօնի կեղրոններն քան  
յարեւլու:

Տիրան, Տիգրան, Տիրիթ, Տրդատ ա-  
նուանց մէջ Տիր Աստուծոյն հետքն կայ,  
գուցէ և անկէ է Տիր բանն:

Եոյն լեզուն իրը ժամանակի քաղաքա-  
կրթութեան բարրան սկսաւ գործածուիլ  
և ի Հայս, գոնէ զարգացելոց կողմանէ<sup>1</sup>,  
որով և Յոյն զրականութիւնն, որոյ հե-  
տեանօց անշուշտ լրուեցաւ փիւնիկ սեր-  
մամիր փոփական տառերու գործածու-  
թիւնն, և գուցէ միայն մենենական զրու-  
թեանց կը գործածուէր: Ժողովուրդն ի  
կիր կ'արկանէր յոյն տառերն որ միենայն  
ծագումն ունէնին և աւելի յարմար էին յու-  
նական լեզուին: Դիրազդարար այս շրջա-  
նի յատուկ որ և է զրական բեկոր հա-  
սած չէ մեզ:

Գուցէ իրաց այս վիճակն շարունա-  
կուեցաւ մինչ ծաւալումն Վրիստոնէու-  
թեան ի Հայս և Ազաթանգեղոս յոյն տա-  
ռերով և հայ բարրառով զրած է իր  
գործն:

Այս շրջանին մէջ անշուշտ մուտք գտնել  
սկսած ի մեզ յոյն բառեր, յոյն բերա-  
կանի ձեր և ի մի բան յունարանու-  
թիւն, Յունարէնն ըիշ վերջ կ'ըլլայ երկրի  
զրական լեզուն և Տիգրան Մեծի զաւակն  
Արտաւազը՝ այդ լեզուով ողբերգութիւններ

1. Ըստ Յերսնիմոսի՝ յոյն լեզուն ընդհանրա-  
ցած էր այս կողմերն, բացի Գաղատիոյ՝ չկար  
երկրի որ չխօսուէր յունարէն:

կը գրէ (Պլուտարքոս): Երկրագործութիւնն  
և վաճառականութիւնն նախորդ շրջանի  
վիճակն ունէին:

Յունական արհեստը և գեղարուեստը  
մեծ Ներգործութիւն ըրած չեն թուիր այս  
ժամանակամիջոցին:

Ն. ՏԱՐԱՆԱՄԵԱՆ

Վ. Ե Բ Զ



### Ա.Ա.ՋԱՐ ՓԱՐՊԵՑԻՈՅ ՄՈ.ՍԻՒ,

Ա. Արշակ

Ա. — Էջ 47. «Եղեալ կատարելա-  
պէս հմուտ երգողական տապիցն և հոեւ-  
տորական յորդասաց յայտնարանութեան»: Ուղղեր էր «ատենարանութեան». հաւա-  
նական թուի, որում կարէ ոյժ տալ իո-  
րենացոյ գովեստը Ս. Սահակի ճարտարիսո-  
սութեան. «հիացեաւ պակեաւ ինքնին թա-  
գաւորն... իրը քաջախօսի և ուժգնաբարի  
առն համարձակախօսի» էջ 536. (տպ.  
Վիճետ. ԱՄԷՂ.Զ):

Բ. — Էջ 549. «Այլ ձեր բագ այն-  
պէս արարին, զի զնդին Հայոց այրընախիր  
որեան այլուր դիպեցան ի գործ»: Դուք  
ուղղեր էր «Այլ ձեսերափի», ինձ թուի որ  
ոչ է ըստ տեղին ուղղագրութիւնգ. վասն  
զի «ձեր բագ» բացատրութիւնն է յատուկ  
ոճ արեւելեան խօսից, որով Միհրան պա-  
տուասիրական գովեստ կու տայ վաղար-  
շին, թէ ձեր թագի այսինքն աստուծային  
շնորհիւ Հայոց զնդի այրընախիր զորքը,  
ուրիշ տեղ գտնուեցաւ, ապա թէ ոչ փո-  
խանակ Վահանայ փոքր զնդի տուած մեծ  
վասին, նորա կատարեալ յաղթութիւն կը  
տանէին:

Գ. — Էջ 246. «Հայթայթանս իմն  
առ շարի և սուզ պատճառանաց մեծի և  
ահաւոր հասելոյ տրտութեան հաշուէին»: Դուք  
ուղղեր էր «Հայթայթանս իմն աս-  
չասոյ»...: Այս ևս ուղղութիւն չէ ըստ  
իմաստին: Վասն զի Հմայելի մահը մեծ  
չարի և սուզի պատճառ եղաւ իւր զնդին,  
«որը իրեւ տեսանէին զիրսն՝ ի սուզ մեծ  
մտեալ ի վայր կործանէին, չունելով ա-

մենքին յոյս ինչ միտթարութեան, այլ անձամբ անձին այր իւրագանչիւր զվեխ փառ մահու և յարաշար կրասեան կատարեալ տեսանէր». Աւստի այս ամենէն զարդարութ փախան լեռները ապատանիրս, ամուր ապաւէն գտնելու, եկած չարի դէմ, որ և մեծ սուզի պատճառ եղաւ ամենցին: Ուստի իրենց անձը փախստամբ և թարստեամբ հազիւ ապրեցնել աշխատողները, հազիւ թէ թանձրամարմին և դանդաղուն արջաները հանէին սարերու զլութը, կամ կը զօդէին քարանձաւներու մէջ:

Ե. — Էջ 23. «Եւ խոնարհեալը յանարգութիւն անողորմութեամբ գտնալը ի բաժանում»: Դուք ուղղեր էր «գերեալը ի բաժանում»: Այս ևս ըստ բնազրի մտաց չթուի լինել: Քանզի Արշակ թագաւորութեան բաժանմամբ գերութեան մէջ շինկաւ, այլ նա կը տրտնչէ թէ անիրաւ կերպով բաժանման ենթարկուեցան: Ուստի այս ասացուածը «անողորմութեամբ զըստեալը ի բաժանում» սամկական ոճ է հեղինակիս, փոխանակ ըսելու «անողորմութեամբ գտաց բաժանեալ»: Նոյնպիսի անհարթ ոճ է և վերոգրեալն «և որ բնաւ անելեալ ի բաժին զանոն ծառայութեան ստացեալ կրէաց յանձինս»:

Զ. — Էջ 29. Լաւագոյն էր որոշել զի՞նչ է «զաղեղնայինն բարբառել» ապա կարելի էր զիշկախականն փոխել ի նիշակական: Որովհետեւ որսի անասունները իւրաքանչիւրն որոց զէնցով կ'որսացուին: արջ մը, կամ կինձ. սրով գեղարդով և նիշակով սպաննել աւելի յարմար է և յաջողակ քան թէ նետով: Խսկ թեթէւնթաց որսականները՝ ցիռն և այծեամն, աւելի դիպող են նետիւ խոցուել և սպաննել: Ուստի անոնց ետեկն վագողը, թէ խիշկախական ձայն պիտի արձակէ և թէ աղեղով նետ թռուցանէ, և թռած նետը զնալով կը գնայ և թէ լարը ճայթելով ականջ կը խլացնէ, այսինքն «աղեղնայինն բարբառի» կամ ըստ Եղիշէի միով մասամբ «ճայթմունց լարից աղեղանց զմեւլիս ամեննեցուն առ հասարակ խլացուցանէին»:

Ե. — Էջ 44. «Եւ զնացեալ քրիստունուրեան հաւատաց որոյ անունն» Ուղղեր էր «Եւ զնացեալ զնեալ քրիստոնուրեան հաւատոց, որոյ անունն»: Այս ուղղագրութիւնը իսպառ կ'աղաւալիք բնազրի իմաստը Ա. Մեսրոր կը դիմէ Պղատոսին, որ հերանու է, սորա աշակերտը նոյնպէս հեթանոս, կրօնցով և անենավ, առած հետը ճարտասաններու զրածներէն կ'երթայ.... Եւ քրիստոնուրեան հաւատարով կը կոչուի Եղիշիան: և թերեւս բնակութիւն կը հաստատէ ի Սամուատ?

Թ. — Էջ 163. «Եւ ճանաչից երեսի ի մէջ սպայից» Դուք ուղղեր էր «ի մէջ Պարսից»: Այս ուղղութիւնն ևս ոչ է ըստ տեղույն, քանզի Ա. Վարդան կը խօսի այն երեսիլի իշխաններու հետ, որոնց իրեն հետ ի կապանս են, և անոնց կ'ըսէ՝ Դուք որ երեսիլի ճանաչուած էր զինուրութեան մէջ, իրրե մեծեր, զօրավարներ և քաջեր, նաև ուրիշ ազգերու մէջ գուվուած էր քաջութեամբ և հաւատով ևն: Հաւատոյ ուրացութեան բռնադատուած հայերը, չէին կարող երեսիլի ըլլալ անհաւատ պարսից մէջ, զի ոչ քաջութեան էր հանգէս, այլ հաւատոյ և քրիստոնէական կրօնքի մէջ հաստատուն ննալուն:

ԺԴ. — Էջ 575. «Թէ չճանաչողութիւն Պերոզի և յետսահարութիւնն բըռնադատեաց զիս մեռանել»: Դուք ուղղեր էր «և հարստահարութիւն»: Այս ուղղութիւնն ևս ոչ թուի ըստ մտաց բնազրին: Նիխոր խօսելով Վահանի հետ ապստամութեան մասին, մեղաւորութիւն կ'ուզէ բառնալ Պերոզի վրայ, ուստի կը ծանրանայ անոր քանական և բարյական բացասական կողմերու վրայ որ է մորի՛ չճանաչողութիւնն խսկ կամքի յետսահարութիւն (թերեւս լաւագոյն՝ յետսամտութիւն) ուստի հարստահարութիւն իրրե արդինց չճանաչողութեան և յետսամտութեան չէ կարող փոխանակել իւր պատասիները:

ԺԴ. — Էջ 577. «Յորմէ ի դառն ծառայութենէն՝ մինչ կենդանի է Արեաց աշխարհն զերծանել ոչ կարէ»: Ուղղեր

էք կենդանի եր... ոչ կարեր»: Այս ուղղութիւնը իսպատ թիւլիմացութիւն է: որովհետեւ խօսքը ոչ թէ Պերողի վրայ է, որ մեռած է, այլ Հնդիթաղին որ կենդանի է և Պերողի անխելքութեամբ, մեծ և ազատ թագաւորութիւնը, ինկնալով Հնդիթաղի ծառայութեան տակ, քանի որ վերջինս կենդանի է, Արեաց աշխարհն ի զառն ծառայութենէն ազատել ոչ կարէ:

Մշացեալը լաւ են ըստ իս:

Հ. Գ. ՆԱԶԱՊԵՏԵՏԱԿ  
ՎԵՐՃ



## Ա. Ռ. Ա. Ք Ե Լ Ս Ի Ւ Ն Ե Ց Ի Ո Յ Ն Ո Ր Ա Գ Ի Ւ Տ Տ Ա Ղ Ե Ր

Քանի որ հայկական զրագանութիւն մը երևան կը բերեն Ձեռագիր Տաղարանները՝ թէ՝ զրագէտներու և թէ՝ բանասէրներու մեծ հաճոյք պիտի պատճառէ անոնց նորագիւտ օրինակները: Ճիշտ է թէ անձանօթ ձեռագիր Տաղարաններ թիչ պէտք է գտնուին, բայց ակայս շատերը՝ որոնց քով կը գտնուին այդ տեսակն՝ արհամարհանքով կը վերաբերուին դէպ ի անոնք: Տարիներ առաջ երբ Նկոսմիդիոյ Առաջնորդը Տ. Ստեփանոս Արքեպոս. Յովակիմեան՝ իր թեմի բոլոր ձեռագրաց կարգաւորեալ ցուցակը Յակ. էֆ., Յովակիմեանին պատրաստել տալով Ա. Ղազար զրկեց՝ մեծ յոյսով որոնեցի միջնադարեան Տաղարաններ և հատ մ'ալ չզտայ, և որցան մեծ հաճոյք զգացի երբ Պարտիզակի մէջ գտայ երկու Ձեռագրեր՝ որոնց առաջինը՝ լաւագոյն Տաղարաններու շարքին մէջ դրուելու կ'արժանանար: Տաղարաններու ծանօթ բազմաթիւ օրինակներ վիենայի և Վենետիկոյ Միկիթ. հարց մատենադարանաց մէջ կը գտնուին, և վասն զի շատ թիչ Տաղարաններ կան որոնց

1. Փափաթելի է որ ըստոր հետկոպաններ և առաջնորդները իրենց թեմի ձեռագրեները ենթէ չեն կրնար առջնորդարան փոխարքել՝ զէթ անոնց կարգաւորեալ ցուցակն կազմն և զայն իրենց մօս պահեն:

Թրիստոսի 1550-1600 թուականին զբուած ըլլան՝ ատոր համար հնութեան տեսակէտով չէ որ յարդ պիտի տանց այդպիսի ձերագոփ մը, այլ՝ իրեն բովանդակութեան Տաղարանն, որ գտայ Արլիկան Մինաս էֆ.ի քով՝ ներկայ վիճակիս մէջ ծ82 էջերէ կը բաղկանայ և կը բովանդակէ 242 տաղ, թիւ մը որ չունին ոչ մի ծանօթ Տաղարան. բաց աստի բազմաթիւ նորութիւններ և նոր տաղասացներ երեան կը հանէ: Ձեռագիրս գլխաւոր երկու գրիչ ունի, առաջին գրչէն յիշատակարան մը կայ յէջ 158 «Փրեցաւ տաղարանն ձեռամբ անարհեստ և անիմաստ սուսու և փուտ գրչի Թուիրման սարկաւագի, ի վայելումն Աստուածատուրին<sup>2</sup> զոր տէր Աստուած վայել տացէ ընդ երկայն աւուրբը. ի թվականութեանն հայկակեան տումի Ծծ՛լ (== 1659) ամի: Վասն որոյ աղանձնէմց զաւը երգեցողաց յորժամ որ հանդիպից » . . . և այլն:

Ձեռագրիս երկորդ գրչէն յէջ ծ82 հետեւալ յիշատակարանը կայ « Գրեցաւ Տաղարանն ձեռամբ Աստուածատորոյ զպրէ՝ ի թվականութեանն հայկան Ծծ՛լ(թ1690) ամին, ամսեան մայսի Փ (10)ին, ի վայելումն անձինս. աղանձնէմ զձեղ չմեղադրել զրիս, քանզի անվարպետի է զիրս: Գարծեալ աղանձնէմ որ զրօնուը ի խրախնանութիւն տաղարանիս՝ Աստուած ողորդի ասացէք ծնօղացս, հօրս տէր Պօղոսին և իրիցեկին մօրս, հուսկ յեսնեալ թշուառականիս Աստուածատորոյ» ևն:

Այս Աստուածատուր գպիրը՝ ըստ իս է այն՝ որ Տաղարանիս մէջ բաւական տաղեր ունի և որ Տիգրանակերոցի կը յորշորչէ ինքզինը: Բնական է որ ձեռագիր առաջին մասը աւելի կանուխ գրուած է վասն զի երկու մասերոն թղթերը կը զանազանուին իրարմէ: Ցաւալին այն է որ այսպիսի տաղարան մը բաւական թը-

2. Ցայտնի կ'երեայ բէ Թուականին փոխանակ Աստուածատուրին՝ « Գրեցասատուրին» զրած էր զոր 31 տարի փերջ Տաղարանին երկորդ մասին զրելը քերթած է ու իր անունը զրած: